



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐԱԿԵՆՏՐ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.
21-րդ դարի մարտահրավերներ
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր
ԽՈՐԵՆ ՄԻՆԻԹԱՐՅԱՆ - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ
ԱՇՈՏ ՍԱԼԼԱԶԱՐՅԱՆ - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մտադրում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ՌՈՒՋԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կենսաբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ, ՀՊՏՀ

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. օրգանական գյուղատնտեսություն, ԳՁՕ,
էկոհամակարգ, կենսաբազմազանություն,
շրջակա միջավայր

Բնակչությանը անվտանգ սննդամթերքով ապահովման հիմնախնդիրը առաջնահերթ նշանակություն ունի ժամանակակից հասարակության համար: Գյուղատնտեսության նվաճումները հիմնականում պայմանավորված են եղել բուսաբուծության ոլորտում հանքային պարարտանյութերի և թունաքիմիկատների, իսկ անասնապահության մեջ՝ հորմոնների և հակաբիոտիկների կիրառմամբ: Օրգանական գյուղատնտեսության ոլորտը ձևավորվեց որպես այլընտրանք ավանդական գյուղատնտեսական արտադրահամակարգերին: Նշված ուղղության զարգացումը դարձել է շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա գյուղատնտեսության վնասակար ներգործության նվազեցման միջոցներից մեկը:

Գյուղատնտեսության ինտենսիվացումը նախատեսում է իրականացնել քիմիացման գործընթացներ, որոնք կապված են պարարտանյութերի և թունաքիմիկատների օգտագործման հետ: Հանքային պարարտանյութերի և թունաքիմիկատների կիրառումը, գիտատեխնիկական այլ նվաճումների հետ միասին, թույլ տվեց բարձրացնել մշակաբույսերի բերքատվությունը մի քանի անգամ: Գյուղատնտեսության արտադրողականության ցուցանիշների կտրուկ աճը մասնակիորեն լուծեց պարենի քանակական ապահովման հետ կապված խնդիրները: Սակայն, 1980-ական թթ. բացահայտվեցին գյուղատնտեսության քիմիացման բացասական հետևանքները (հողային և ջրային ռեսուրսների որակական անկում, կենսաբազմազանության նվազեցում և այլն) շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա:

Պեստիցիդների բացասական հետևանքներից են.

1. դրանք ոչնչացնում են նաև օգտակար միջատներին և այլ կենդանի օրգանիզմներին՝ որոշ դեպքերում նպաստավոր պայմաններ ստեղծելով գյուղատնտեսական վնասատուների տարածման համար,
2. դրանց որոշ տեսակներ բացասական ազդեցություն ունեն հողում բնակվող այնպիսի օրգանիզմների վրա, որոնք անհրաժեշտ են հողի որակական հատկությունները պահպանելու և բարելավելու համար,
3. դրանց կիրառումը բացասաբար է ազդում հողագործության ոլորտում ներգրավված աշխատողների առողջության վրա,

4. դրանք սննդային շղթաների միջոցով փոխանցվում են տարբեր օղակներ, ընդ որում, մարդու առողջության վրա բացասական հետևանքները կարող են բացահայտվել երկարաժամկետ կտրվածքում:

1980-ական թթ. ստեղծվեցին գենային ձևափոխության տեխնոլոգիաներ, որոնք անմիջապես սկսեցին կիրառվել ԱՄՆ-ի գյուղատնտեսության մեջ, հետագայում տարածվեցին նաև այլ երկրներում: Նշված տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս որոշակի գենային հատկություններ հաղորդելու ցանկացած օրգանիզմին կամ բույսին՝ դարձնելով այն ավելի կայուն կլիմայական պայմանների և վնասատուների նկատմամբ: Կարելի է փոփոխել փորձարկվող օբյեկտի ձևը, գույնը կամ էլ, օրինակ, ապրանքի պահպանման ժամկետները: Շատ դեպքերում գենետիկորեն ձևափոխված բույսերի կիրառումը զգալիորեն բարձրացնում է բերքատվության ցուցանիշը:

Վերջին երկու տասնամյակում գենետիկորեն ձևափոխված մշակաբույսերով զբաղեցված հողատարածքները 1.7 մլն հա-ից ավելացել են մինչև 181.5 մլն հա:

Ներկայումս բազմաթիվ քննարկումներ են ընթանում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (ԳՁՕ) կիրառման անվտանգության շուրջ: Ոլորտի շատ մասնագետներ կարծում են, որ դեռևս չի անցել այնքան ժամանակ, որ հստակորեն կարելի լինի տալ վերջնական եզրակացություններ դրանց անվտանգության մասին: Չի բացառվում, որ բացասական այդ հետևանքները կանդրադառնան ապագա սերունդների վրա:

Այս ամենի հետևանքով անհրաժեշտություն առաջացավ վերանայելու բնական համակարգում կիրառվող գիտական իմացությունների մոտեցումները: Ի պատասխան արդեն դիտարկված նորարարությունների՝ գյուղատնտեսության ոլորտում ձևավորվեցին էկոլոգիական ուղղվածության տարատեսակ արտադրահամակարգեր, որոնք պետք է նպաստեին ագրոլորտի կայուն զարգացմանը:

Գյուղատնտեսության վարման այս մոտեցումները կարևորում են համակարգում տեղի ունեցող բնական գործընթացների օգտագործումը: Նման ռազմավարությունները հաճախ անվանում են «էկոլոգիական» կամ «էկոհամակարգային»: Դրանք ապահովում են համակարգի արդյունավետությունը և ճկունությունը դրա բաղադրիչների փոխկապակցվածության, փոխներգործության և փոխազդեցության միջոցով: Նման համակարգերի օրինակներ են օրգանական և կենսադինամիկ գյուղատնտեսությունը, պերմամշակույթը և այլն:

Օրգանական գյուղատնտեսական համակարգերում մեծ նշանակություն է տրվում վերականգնվող ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը՝ նպատակ ունենալով բարելավելու շրջակա միջավայրի որակը ապագա սերունդների համար: Նշված համակարգերը որպես կանոն հենվում են ցանքաշրջանառության, կանաչ պարարտանյութերի, կոմպոստների, բնական եղանակով ստացված պարարտանյութերի, վնասատուների դեմ պայքարի կենսաբանական միջոցների, բույսերի մեխանիկական մշակման և ժամանակակից տեխնոլոգիաների վրա: Օրգանական համակարգերում արգելվում է հակաբիոտիկների և աճի հորմոնների օգտագործումը: Օրգանական ապրանքատեսակներն արտադրվում են առանց ավանդական պեստիցիդների, հանքային պարարտանյութերի և

ԳԶՕ-ի կիրառման: Որպեսզի ապրանքը պիտակավորվի «օրգանական», այն պետք է հավաստագրված լինի համապատասխան մարմնի կողմից:

Աղյուսակ 1

Օրգանական գյուղատնտեսության բացարձակ և հարաբերական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ համեմատած ավանդական գյուղատնտեսության հետ¹

Բացարձակ վերաբերում է օրգանական գյուղատնտեսության ազդեցությանը շրջակա միջավայրի վրա, հարաբերական - վերաբերում է հարաբերական ազդեցությանը՝ ավանդական համակարգերի հետ համեմատած:

Ոլորտ	Ասպեկտ/ցուցանիշ	Շրջակա միջավայրի վրա ազդեցություն*	
		Բացարձակ	Հարաբերական
Կենսաբազմազանություն	Գենետիկ բազմազանություն	+	+
	Բուսական բազմազանություն	+	++
	Կենդանական բազմազանություն	+	+++
	Բնակավայրերի բազմազանություն	+?	+
Լանդշաֆտ	Լանդշաֆտների կառուցվածքը և գեղագիտական արժեքը	+?	+
Հող	Հողի օրգանական նյութը և թթվայնությունը	?	++
	Կենսաբանական ակտիվություն	+?	+++
	Հողի կառուցվածք	?	+
	Էրոզիա	-	++/-
Ստորգետնյա և մակերեսային ջրեր	Անապատացում	+	+
	Մննդատարրերի օգտագործում և հավասարակշռություն	-	++
	Նիտրատների լվացում	-	++/-
	Ֆոսֆոր	0	+?
	Պեստիցիդներ	-	+++
Կլիմա և մթնոլորտային օդ	Հիվանդածին մանրէներ	-	-?
	Ածխաթթու գազ (CO2)	+?	+?
	Ազոտի ենթօքսիդ (N2O)	-	+/-?
	Մեթան (CH4)	-	?
Էներգիայի օգտագործում	Ամոնիակ (NH3)	-	+/-?
	Էներգիայի օգտագործման ինտենսիվություն	×	++/-
	Էներգիայի օգտագործման արդյունավետություն	×	+?

* + = մի փոքր ավելի լավ; ++ = ավելի լավ; +++ = էականորեն լավ; ++/- = լավ, որոշ բացասական կողմերով; +? = լավ, որոշ անորոշություններով; +/-? = մասնակիորեն լավ, մասնակիորեն վատ, որոշ անորոշություններով; ? = պարզ չէ; - = բացասական ազդեցություն; 0 = զրոյական ազդեցություն կամ փոփոխություն; × = կիրառելի չէ

¹ Kristiansen P., Taji A., Reganoldt J., Organic Agriculture. A Global Perspective. Cornell University Press. New York, 2006, p. 280.

2014 թ. դրությամբ օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվում էր աշխարհի 172 երկիր: Այդ նպատակով օգտագործվում էին 43.7 մլն հա գյուղատնտեսական նշանակության հողեր: Հայտնի է նաև, որ 2.3 մլն արտադրող զբաղվում էր օրգանական ապրանքատեսակների արտադրությամբ: Օրգանական սննդամթերքի համաշխարհային շուկայի ծավալը 2014 թ. կազմում էր 80 մլրդ ԱՄՆ դոլար¹:

Ընդհանուր առմամբ, գյուղատնտեսական գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա գնահատելու համար օգտագործվում են տարատեսակ ցուցանիշներ: Աղյուսակ 1-ում ներկայացված են այն հիմնական ցուցանիշները, որոնք կիրառվում են գնահատման նշված գործընթացն իրականացնելու համար:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության բացարձակ և հարաբերական գնահատումներ իրականացվել են օրգանական և ավանդական գյուղատնտեսության վարման բազմաթիվ համեմատական հետազոտությունների հիման վրա՝ աշխարհի տարբեր երկրներում: Նշված հետազոտությունների արդյունքները վկայում են, որ, էկոլոգիական անվտանգության տեսանկյունից, օրգանական գյուղատնտեսության վարումն առավել արդյունավետ է: Ի տարբերություն ավանդական գյուղատնտեսության, որի դեպքում պեստիցիդների օգտագործման մեծ ծավալները հողի, ջրի և մթնոլորտային օդի աղտոտման պատճառ են դառնում, օրգանական գյուղատնտեսությունը գրեթե ամբողջությամբ սահմանափակում է դրանց օգտագործումը: Հաջորդ կարևոր հանգամանքը, հոգուտ օրգանական գյուղատնտեսության, հողի պահպանությունն է: Հողի խնամքը օրգանական գյուղատնտեսության առաջնային սկզբունքներից է: Ընդ որում, դա իրականացվում է հողի օրգանական նյութի բարձր մակարդակի, կենսաբանական ակտիվության խթանման, սննդատարրերի ավելի հավասարակշռված շրջապտույտների և հողի էրոզիայի ավելի ցածր ռիսկերի շնորհիվ: Հաջորդ կարևոր առավելությունն այն է, որ օրգանական գյուղատնտեսությունը նպատակ ունի նպաստելու կենսաբազմազանության մակարդակի բարձրացմանը, ինչի արդյունքում կարելի է եզրակացնել, որ օրգանական ֆերմերային տնտեսություններն ավելի նպաստավոր պայմաններ են ստեղծում բուսական և կենդանական բազմազանության համար՝ համեմատած ավանդական տնտեսությունների հետ:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ օրգանական գյուղատնտեսությունը զերծ չէ այնպիսի խնդիրներից, ինչպիսիք են ջրային ռեսուրսների աղտոտումը և սննդային շղթաներում հիվանդածին մանրէների առկայությունը (կապված օրգանական պարարտանյութերի ավելի հաճախակի օգտագործման հետ): Վերը բերվածը, սակայն, չի նշանակում, որ ավանդական համակարգերն ունեն որոշակի առավելություններ այս տեսանկյունից, քանի որ այդ նույն խնդիրներն առկա են նաև դրանցում:

Օրգանական համակարգերում խնդիրներ կարող են առաջանալ նաև ազոտի ենթօքսիդի (N_2O) և մեթանի (CH_4) արտանետումների հետ կապված: Գոմաղբի պահուստները դրանց արտանետման հիմնական աղբյուր կարող են լինել: Բացի այդ, միավոր արտա-

¹ Willer H., Lernoud J., The World of Organic Agriculture. Statistics and Emerging Trends 2016. IFOAM, Bonn & FiBL, Frick 2016, p. 23.

դրանքի հաշվով, մեթանի արտանետման հնարավորություններն ավելի բարձր են օրգանական գյուղատնտեսությունում:

Քիչ թվով համեմատական հետազոտություններ են կատարվել՝ կապված օրգանական և ավանդական համակարգերում էներգիայի օգտագործման հետ: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ այդ հետազոտությունները վկայում են, որ օրգանական գյուղատնտեսության վարման դեպքում, ընդհանուր առմամբ, ավելի քիչ էներգիա է օգտագործվում ինչպես մեկ հա-ի, այնպես էլ միավոր արտադրանքի հաշվով: Սակայն, դժվար է կատարել հստակ եզրակացություններ, քանի որ հետազոտությունները տարբերվում են թե՛ ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությամբ, թե՛ ուսումնասիրության օբյեկտի կառուցվածքային առանձնահատկություններով:

Այս ամենի արդյունքում պարզ է դառնում, որ օրգանական գյուղատնտեսության զարգացումը նպաստում է հողօգտագործման կայուն համակարգերի ստեղծմանը: Կարևոր է նաև նշել, որ գյուղատնտեսության տվյալ ուղղության զարգացման համար առաջնային նշանակություն ունի ֆերմերային տնտեսություններին բազմակողմանի աջակցության ցուցաբերումը:

Օրգանական սննդամթերքի շուկայի զարգացումը մեծ հեռանկարներ է ստեղծում զարգացող երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համար: Ներկայումս զարգացող երկրների օրգանական գյուղատնտեսական արտադրանքի հիմնական մասը զարգացած երկրներ արտահանման համար է նախատեսված: Աշխատանքային, ինչպես նաև արտադրական ծախսումների հարաբերականորեն ցածր մակարդակի պայմաններում զարգացող երկրներում արտադրված էկոլոգիապես մաքուր ապրանքներն ավելի էժան են: Որոշ օրգանական արտադրատեսակներ բավական մեծ պահանջարկ ունեն զարգացած երկրների շուկաներում այն պատճառով, որ դրանք չեն արտադրվում Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրներում, հետևապես՝ զարգացող երկրների կողմից այդ արտադրատեսակների արտադրությունը, առաջարկի և պահանջարկի ճեղքվածքի առկայության պայմաններում, տնտեսապես շահավետ է: Օրգանական գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետության համար նոր առևտրային լծակներ է ստեղծում՝ հնարավորություն՝ է ընձեռում դուրս գալու արտաքին շուկա և ամրապնդվելու այնտեղ, ինչպես նաև բարձրացնելու զբաղվածության մակարդակը:

Այսպիսով՝ օրգանական գյուղատնտեսությունը ներկայումս դիտարկվում է որպես գիտականորեն հիմնավորված այլընտրանք ավանդական գյուղատնտեսությանը: Օրգանական գյուղատնտեսական համակարգերը հիմնված են արտադրության առանձնատուկ մեթոդների վրա, որոնք նպատակ ունեն հասնելու սոցիալապես, էկոլոգիապես և տնտեսապես կայուն ագրոէկոհամակարգերի ստեղծմանը:

РУЗАННА АРАКЕЛЯН

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ АЛЬТЕРНАТИВНОГО ЗЕМЛЕДЕЛИЯ В РА

Ключевые слова: органическое сельское хозяйство, ГМО, экосистема, биоразнообразие, окружающая среда.

Обеспечение населения безопасными продуктами питания имеет первостепенное значение для современного общества. Достижения в сельском хозяйстве были обусловлены использованием минеральных удобрений и ядохимикатов в растениеводстве, а также гормонов и антибиотиков в животноводстве. Органическое сельское хозяйство сформировалось как альтернатива традиционным сельскохозяйственным производственным системам. Развитие данного направления стало одним из способов снижения отрицательного воздействия сельского хозяйства на окружающую среду и здоровье человека.

RUZANNA ARAKELYAN

DEVELOPMENT PROSPECTS OF ALTERNATIVE AGRICULTURE IN THE REPUBLIC OF ARMENIA

Key words: organic agriculture, GMO, ecosystem, biodiversity, environment.

Ensuring the safety of food is of significant importance for modern society. The basic achievements in agriculture were largely due to the use of fertilizers and pesticides in crop production, as well as hormones and antibiotics in husbandry. Organic farming emerged as an alternative to traditional agricultural production systems. The development of this area has become one of the ways to reduce the negative impact of agriculture on the environment and human health.

ՍԱՄՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐԵՑՄԱՆ ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. կլիմա, հարմարեցում, ծրագրեր, ռեսուրսախնայողություն, նորամուծություն

Միջազգային հանրությունը լուրջ ջանքեր է գործադրում կլիմայի փոփոխության կանխարգելման և հետևանքների մեղմացման ուղղությամբ: Հայաստանը, որպես լեռնային երկիր, ունի ուղղաձիգ գոտիականություն, և կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացման նպատակով պահանջվում են, ըստ գոտիների, տարբերակված մոտեցում և